ԿԱՐԾԻՔ

ՔՐԻՍՏԻՆԵ ՀՐԱՉԻԿԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երրորդ հազարամյակում կրթությունը բնութագրվում է որպես բարդ և բազմաշերտ համակարգ: Մի կողմից, կրթությունը մարդկային գործունեության կարևոր ոլորտներից է, և կրթական ձեռքբերումները նպաստում են հասարակական, գիտատեխնիկական, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումներին, մյուս կողմից՝ կրթության ոլորտում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, որոնք անքակտելիորեն կապված են համաշխարհային հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում տեղի ունեցող գործընթացների հետ: Անկասելի զարգացումներ են ընթանում բարձրագույն կրթության համաեվրոպական տարածքում. վերանայվում և արդիականացվում են կրթական համակարգի կառավարման հիմունքները: Այս դիտանկյունից գիտական հետաքրքրություն է ներկայացնում Քրիստինե Սաֆարյանի՝ **«Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» խորագրով թեկնածուական ատենախոսությունը:**

Հայաստանը և Իտալիան բնութագրվում են քաղաքական և մշակութային բազմազանությամբ, ունեն բարձրագույն կրթության համակարգեր, որոնք ձևավորվել են տարբեր պատմական ժամանակաշրջաններում, ինստիտուցիոնալ և կրթական տարբեր քաղաքականությունների համատեքստում, միևնույն ժամանակ ներգրավված են Բոլոնյան գործընթացում: Բարեփոխումների իրականացման ճանապարհին նշված երկրներն առերեսվում են ներքին և արտաքին մարտահրավերների, որոնք պահանջում են նպատակաուղղված և արդյունավետ քաղաքականություն՝ պետական աջակցությամբ, ֆինանսավորմամբ և ազգային մակարդակով հստակ ռազմավարական հենքով: Վերոնշյալ հարցերի

ուսումնասիրությամբ պայմանավորված է սույն հետազոտության **արդիականությունը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսությունը կառուցված է գիտական աշխատանքին ներկայացվող չափանիշներին համապատասխան:

Ատենախոսը հստակ սահմանել է նպատակը, ձևակերպել է ութ առաջադիր խնդիրներ, որոնք իրենց լուծումներն են գտել ատենախոսության համապատասխան գլուխներում:

Ատենախոսը հանգամանորեն վերլուծել է Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները՝ վերհանելով դրանց նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Որպես **գիտական նորույթ** պաշտպանության են ներկայացվել **հինգ դրույթներ,** որոնք հիմնավորված են, ամբողջական և իրենց հիմնավորումն են գտել տասը կետից բաղկացած եզրակացություններում:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «ՀՀ բարձրագույն կրթության համակարգը»** վերնագրված, բաղկացած է 6 ենթագլխից, որոնցում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքը, քաղաքականությունն ու իրավական կարգավորումները, պետության դերը բարձրագույն կրթության ֆինանսավորման և վերահսկողության գործում, ֆինանսավորման կառուցակարգերը, Բոլոնյան գործընթացի համատեքստում բարձրագույն կրթության բարեփոխումները, բարձրագույն կրթության կառավարման և որակի ապահովման գործընթացների առանձնահատկությունները:

Ատենախոսն իրավացիորեն փաստում է, որ Հայաստանում բարեփոխումները համակարգային բնույթ են ստացել միայն 2004 թվականին «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ինչպես նաև մշակվել է կրթության զարգացման 2008-2015թթ. ռազմավարությունը:

2025 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքը: Աշխատանքում կատարվել է օրենքի դրույթների վերլուծություններ և դրանց վերաբերյալ դիտարկումներ:

Ատենախոսության **երկրորդ** գլուխը՝ **«Իտալիայի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը»**, բաղկացած է ևս 6 ենթագլխից: Ատենախոսը ներկայացրել է Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, պետական քաղաքականությունը և իրավական հիմքերը, բարձրագույն կրթության համակարգը մինչ Բոլոնյան գործընթացը և բարեփոխումները 1999 թվականից սկսած՝ Բոլոնյան գործընթացով պայմանավորված: Համեմատական վերլուծության արդյունքներն ամփոփված են աղյուսակ 4-ում: Մանրամասը քննարկվել են միաժամանակյա ֆինանսավորման համակարգը, պետական ֆինանսավորումը՝ պայմանավորված երեք առանցքային ցուցանիշներով, կրթաթոշակ տրամադրելու պայմանները, վերլուծված է Իտալիայի բարձրագույն կրթության գործող համակարգի կառավարման առանձնահատկությունները Ջելմինիի օրենքով, որակի ապահովման գործընթացը:

Ուշադրության արժանի է ատենախոսության **երրորդ** գլուխը՝ վերնագրված՝ «**Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները**», որտեղ ատենախոսի կողմից ներկայացվել են երկու պետությունների բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանություններն ու տարբերությունները:

Այսպիսով, ատենախոսը բավարար տեսական հիմնավորում է տվել հիմնախնդրին: Աշխատանքի գիտականությունն ապահովում են համապատասխան մեջբերումները և հիմնավորումները: Հեղինակի խոսքը գիտական է, դրսևորվել են վերլուծական հմտություններ:

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, հետազոտության խնդիրների հաջողված լուծումը, աշխատանքում արված վերլուծությունների ամբողջականությունը, եզրակացությունների

հիմնավորվածությունը՝ ատենախոսությունը գնահատում ենք արժեքավոր ուսումնասիրություն:

Սեղմագիրը բովանդակում է ատենախոսության հիմնական դրույթները:

Նշված առավելությունների կողքին կարելի է առանձնացնել որոշ նկատառումներ.

1. Կարելի էր Իտալիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության բարեփոխումները Բոլոնյան գործընթացի համատեքստում և որակի ապահովման գործընթացները քննարկել առանձին գլուխներում՝ վերլուծական համադրության արդյունքում ապահովելով զարգացումների վերաբերյալ առավել ընդգրկուն տեղեկատվություն:
2. Աշխատանքում հանդիպում են որոշ մտքերի կրկնություններ:
3. Աշխատանքում առկա են տեխնիկական սխալներ և վրիպումներ:

Վերը թվարկված նկատառումներն ամենևին չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը:

Այսպիսով, **Քրիստինե Հրաչիկի Սաֆարյանի՝ «Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն»** խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
մանկավարժական գիտությունների թեկնածու՝ Ա. Տ. Մայիլյան

Ա. Տ. Մայիլյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Գավառի պետական համալսարանի
գիտական քարտուղար, բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Ասոյան
17.06.2026թ.